

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հոկտեմբերի 2006 թվականի N 1493-Ա

#### ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ 49/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԸ ՏՆՕՐԻՆԵՆՈՒ ՄԱՍԻՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին, 68-րդ հոդվածի 7-րդ կետերին, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝

ա) «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող շենքից 14650 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով, 1812.8 քառ. մետր տարածքի (1-ին հարկից՝ 288.0 քառ. մետր, 2-րդ հարկից՝ 764.9 քառ. մետր, 3-րդ հարկից՝ 759.9 քառ. մետր) հանձնումը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ օրենքով սահմանված կարգով համապատասխանաբար նվազեցնելով ընկերության կանոնադրական կապիտալի չափը՝ բաժնետոմսերի ընդհանուր թվի պակասեցմամբ.

բ) սույն որոշման 1-ին կետի «ա» ենթակետում նշված տարածքից 9570 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով, 1150.7 քառ. մետր տարածքի (1-ին հարկից՝ 288.0 քառ. մետր, 2-րդ հարկից՝ 102.8 քառ. մետր, 3-րդ հարկից՝ 759.9 քառ. մետր) ներդրումը «Զափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով.

գ) Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի, «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Զափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունների միջև Երևանի Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող շենքի սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) պայմանագրի կնքումը:

**(1-ին կետը փոփ. 14.06.07 N 664-Ա)**

2. Սույն որոշման 1-ին կետի «ա» ենթակետում նշված տարածքից 5080 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով, 662.1 քառ. մետր մակերեսով տարածքն ամրացնել «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

**(2-րդ կետը փոփ. 14.06.07 N 664-Ա)**

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված տարածքների գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարելու պարտավորությունը կրում են «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Զափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունները:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. հոկտեմբերի 28  
Երևան